**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ**

22.03.2018թ.
ժամը 11 $^{00}$

**Բացողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ֆինանսական վարչության ֆինանսական հոսքերի բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Սալայան,
ՀՀ ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության տեխնիկական բաժնի սպա, մայոր Ա. Մակարյան:

**Օրակարգը՝**
1. **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3»** ծածկագրով ընթացակարգին **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում ներկայացված հայտերը:
Սահմանված ժամկետում **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում բեռնվել է ներքոհիշյալ մասնակցի հայտը, որը սահմանված կարգով հաստատվել է և ներկայացվել է գնահատման հաջորդ փուլ.

Սահմանված կարգով ներկայացված մասնակիցների հայտ, որն ընդունվել է **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքի կողմից և համարվել է հետագա գնահատման համար ընդունելի.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | Ա/Ձ Տիգրան Սամվելյան Արմենակի |
| 2 | «Ավտոֆան էյ Սի» ՍՊԸ |
| 3 | «Էլիպս Ջի էյ» ՍՊԸ |
| 4 | «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ |
| 5 | «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ |
| 6 | «Էրոդավ» ՍՊԸ |
| 7 | «ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ |
| 8 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ |
| 9 | «Հենի Ռադիո» ՍՊԸ |
| 10 | «Կոմպասս» ՍՊԸ |
| 11 | «Մաժէվ» ՍՊԸ |
| 12 | «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ |
| 13 | «Միկրորինգ» ՍՊԸ |
| 14 | «Նարնիկ» ՍՊԸ |
| 15 | «Նորմա-պլյուս» ՍՊԸ |
| 16 | «Պատրոն ՌՄ» ՍՊԸ |
| 17 | «Տոպազ-95» ՍՊԸ |
| 18 | «Յուտեկ» ՍՊԸ |
| 19 | «Վարբադ» ՍՊԸ |
| 20 | «Վարմէքս» ՍՊԸ |
| 21 | «ՎԵՆԿՈՆ» ՍՊԸ |

- Հայտ, որն ընդունվել է, սակայն **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար անընդունելի (հանձնաժողովը հայտը բացելու կամ գնահատելու հնարավորություն չունի).

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | Ռաֆ-Օջախ ՍՊԸ |

բացող Ս. Սալայան

բացող Ա. Մակարյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

## «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

22.03.2018թ.
ժամը 11 ^00^

Մասնակիցներում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան

**Գնահատողներ՝**

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌԵՊ, ԿԱՊ-ի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ռ. Ջաղոյան,

-ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Խ. Երիցյան,

-ՀՀ ՊՆ ՌՌ ՀՕԾ բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան,

-ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

***«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

---

(Ա.Բաղրամյան)

1. Տեղեկություններ հայտ/գնային առաջարկ/ ներկայացրած և չներկայացրած մասնակիցների մասին.

2 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հարցում պարունակող էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հարցման պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

4 Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:***

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Ա.Բաղրամյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Կապի սարքերի և սարքավորումների» ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3»** ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | **Ա/Ձ Տիգրան Սամվելյան Արմենակի** |
| 2 | **«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ** |
| 3 | **«Էլիպս Ջի Էյ» ՍՊԸ** |
| 4 | **«ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ** |
| 5 | **«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ** |
| 6 | **«Էրոդավ» ՍՊԸ** |
| 7 | **«ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ** |
| 8 | **«Էյջ Գրուպ» ՍՊԸ** |
| 9 | **«Հենի Ռադիո» ՍՊԸ** |
| 10 | **«Կոմպասս» ՍՊԸ** |
| 11 | **«Մաժէվ» ՍՊԸ** |
| 12 | **«Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ** |
| 13 | **«Միկրորինգ» ՍՊԸ** |
| 14 | **«Նարնիկ» ՍՊԸ** |
| 15 | **«Նորմա-պլյուս» ՍՊԸ** |
| 16 | **«Պատրոն ՌՄ» ՍՊԸ** |
| 17 | **«Տոպազ-95» ՍՊԸ** |
| 18 | **«Յուտեկ» ՍՊԸ** |
| 19 | **«Վարբադ» ՍՊԸ** |
| 20 | **«Վարմէքս» ՍՊԸ** |
| 21 | **«ՎԵՆԿՈՆ» ՍՊԸ** |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:***

***26.03.2018թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.***

**2 . «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Ա.Բաղրամյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի, բացառությամբ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի հայտից՝ հանձնաժողովը հայտը բացելու կամ գնահատելու հնարավորություն չունի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտում հրավերով /հարցումով/ պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը առկա են, բացառությամբ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի հայտից՝ հանձնաժողովը հայտը բացելու կամ գնահատելու հնարավորություն չունի:

2.3 Մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3»** ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ **«Ավտոֆան Էյ Սի» և «Վենկոն» ՍՊԸ**-ների և **Ա/Ձ Տիգրան Սամվելյան Արմենակի** կողմից ներկայացված փաստաթղթերի: **«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ**-ի ներկայացված հայտի **Հավելված 1**-ում պատվիրատուի անվանումը սխալ է լրացված, **«Վենկոն» ՍՊԸ**-ի հայտով ներկայացված **Հավելված 2.1**-ում ընթացակարգի ծածկագիրը լրացված է սխալ, իսկ **Ա/Ձ Տիգրան Սամվելյան Արմենակի** կողմից ներկայացված **Հավելված 1**-ում նշված չափաբաժինների քանակը և համարները չեն համապատասխանում գնային առաջարկով՝ Հավելված 5-ով, ներկայացված չափաբաժինների քանակին և համարներին:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և մասնակիցներից պահանջել շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

***28.03.2018թ***-*ին գնահատող հանձնաժողովը շարունակեց գնահատման աշխատանքները.*

Սահմանված ժամկետում **«Ավտոֆան Էյ Սի»** և **«Վենկոն» ՍՊԸ**-ների և **Ա/Ձ Տիգրան Սամվելյան Արմենակի** կողմից ուղարկվեց հայտում առկա անհամապատասխանությունների շտկված տարբերակները, որոնք ընդունվեցին գնահատող հանձնաժողովի կողմից:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

---

(Ա.Բաղրամյան)

3.1 Գնային առաջարկ է ներկայացրել 21 մասնակից.

**Մասնակիցների կողմից ներկայացված գները մեծ ծավալի պատճառով ներկայացված են կից Excel տարբերակով:**

3.2 Մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3»** ծածկագրով ընթացակարգի 2-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 57-րդ, 66-րդ և 68-րդ չափաբաժիններով մասնակիցների առաջարկած գները բարձր են ընթացակարգի վերը նշված չափաբաժինների համար սահմանված նախահաշվային գներից գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, որոշեց՝ գների նվազեցման նպատակով **03.04.2018թ. ժամը 15:00-ին** ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**03.04.2018թ-ին** հրավիրված բանակցությանը ներկայացան **«Էլիպս Ջի Էյ»** և **«ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ**- ները: Բանակցության արդյունքում 66-րդ և 68-րդ չափաբաժիններում «Էլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ն նվազեցրեց գինը առաջարկելով 66-րդ չափաբաժնի համար 2880000 իսկ 68-րդ չափաբաժնի համար 1531200 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

---

(Ա.Բաղրամյան)

4.1 **07.04.2018թ. հանձնաժողովը շարունակելով աշխատանքները «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3»** ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել 1, 5, 9, 11, 25, 27, 28, 32, 33, 38, 39, 41, 45, 46, 47, 48, 49, 54, 59, 60, 61 և 62-րդ չափաբաժիններում **«Յուտեկ» ՍՊԸ**-ն, 20, 21, 22, 23 և 58-րդ չափաբաժիններում **«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ**-ն, 18, 66, 68 և 69-րդ չափաբաժիններում **«Էլիպս Ջի Էյ» ՍՊԸ**-ն, 12, 24, 26, 64, և 65-րդ չափաբաժիններում **«Էրոդավ» ՍՊԸ**-ն, 19, 35, 36, 37, 40, 42, 43, 44, 50, 51 և 52-րդ չափաբաժիններում **«Հենի Ռադիո» ՍՊԸ**-ն, 6, 7, 8, 10, 53 և 55-րդ չափաբաժիններում **«Մաժէվ» ՍՊԸ** –ն, 31-րդ չափաբաժնում **«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ**-ն, 29-րդ չափաբաժնում **«Էյչ Գրուպ» ՍՊԸ**-ն, 30-րդ չափաբաժնում **«Վարքադ» ՍՊԸ**-ն, 34-րդ չափաբաժնում **«Տոպազ-95» ՍՊԸ**-ն, 67-րդ չափաբաժնում **«Վարմէքս» ՍՊԸ**-ն, 17-րդ չափաբաժնում **«ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ**-ն, 16-րդ չափաբաժնում **«Միկրոռինգ» ՍՊԸ**-ն, 63-րդ չափաբաժնում **«ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ**-ն:

Միաժամանակ գնահատող հանձնաժողովը 3, 4 և 56-րդ չափաբաժինները հայտարարեց չկայացած առաջարկի բացակայության պատճառով, իսկ 2, 13, 14, 15 և 57-րդ չափաբաժինները հայտարարեց չկայացած ոչ շահավետ առաջարկի պատճառով (նախահաշվային գնից բարձր գին):

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

---

(Ա.Բաղրամյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:***

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա.Բաղրամյան)

6.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3»** ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:***

**Գնահատող, (ԳԱՊ)** Տ. Մաթևոսյան

**Գնահատող,** Ռ. Ջադոյան

**Գնահատող** Խ. Երիցյան

**Գնահատող** Հ. Բարսեղյան

**Գնահատող** Ա. Մաղաքյան

**Գնումները համակարգող՝** Ա. Բաղրամյան